ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artik.shirak@mta.gov.am, ինտ, կայք՝ www. artik.am

31 հոկտեմբեր 2024թ.

«ՄԱՐԻՆԵ ԱՆԴՐՅԱՆ ԱԼԻԿԻ» ԱՁ-Ի ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ՝ Մ.ԱՆԴՐՅԱՆ-ԻՆ

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ
N ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/12-6

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի տիկին Անդրյան՝ «Մարինե Անդրյան Ալիկի» ԱՁ-ի և Արթիկի համայնքապետարանի միջև կնքվել է «25» մարտ 2024թ-ի «ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/12-6» ծածկագրով պայմանագիր, որից հետո կնքվել է թիվ համաձայնագիր 1, որի շրջանակում պետք է մատակարարվեր 8-դ չափաբաժնով նախատեսած սեղանի խաղեր՝ բիլիարդ: ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար ապրանքների ձեռքբերման՝«սեղանի խաղեր բիլիարդ նորը բազալտե քարով սեղան,որակյալ կտորով,չափսերն /3*51.8/ գրաֆիտե շառերով,կախովի շառերի ման կիերը անկյունակը: Տեղեկացնում ենք, որ պայմանագրի հավելված թիվ 2-ի 8-րդ չափաբաժնի բիլիարդի մատակարարման ժամկետը սահմանվել է 50 օրացուցային օր,սակայն պայմանագրով նշված ժամկետում Ձեր կազմակերպությունը «Մարինե Անդրյան Ալիկի» ԱՁ-ն չի մատակարարել սեղանի խաղեր բիլիարդը խախտելով մատակարարման ժամկետները, ինչպես նաև հրաժարվել է պայմանագրով ստանձնած պարտավորություններն չմատակարարելով վերը նշված ապրանքը: Հայտնում ենք Ձեզ՝ որ ընկերության կողմից չեն պահպանվում պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետները: Պայմանագրի 2.1.7 կետի (բ) ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը,եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագրի դրույթներն.

2.1.1 խախտել է պայմանագրի ժամկետը (մատակարարման ժամանակացույցը),
Հաշվի առնելով այն հանգամանքը,որ «Մարինե Անդրյան Ալիկի» ԱՁ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունը՝Պատվիրատուն միակողմանի լուծում է 8-րդ չափաբաժինը,պայմանագիրը համարելով այն լուծված ընդհանուր 1 538 000 (մեկ միլիոն հինգ հարյուր երեսունութ հազար) ՀՀ դրամի չափով՝պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:Ընդ որում,գնումների գործընթացի կազմակերպման կարգի 121-րդ կետի

համաձայն՝մասնակցի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը,դրանում գտնվելու ժամանակահատվածում,ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները,որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը մասնակիցը հրավերով և կամ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի,պայմանագրի և կամ որակավորման ապահովման գումարը:
Այսպիսով «Մարինե Անդրյան Ալիկի» ԱՁ-ին տրվում է 10 օրացուցային օր տուժանքի մասին համաձայնագրով (Հավելված 3.2) սահմանված որակավորման ապահովման 255 000 /երկու հարյուր հիսունհինգ հազար / ՀՀ դրամը և (Հավելված 4.1) սահմանված պայմանագրի ապահովման 170 000 /մեկ հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ գումարները ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի 900205101109 հաշվին փոխանցելու նպատակով, ինչպես նաև որակավորման և պայմանագրի ապահովումները և վճարման պահանջագիրը կներկայացվեն Ձեր կազմակերպության սպասարկող բանկ:
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում՝ պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Միաժամանակ տեղեկացնում ենք,որ եթե վերը նշված վճարման ենթակա գումարները փոխանցվեն ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի 900205101109 հաշվեհամարին, ապա «Մարինե Անդրյան Ալիկի» ԱՁ-ի Անհատ Ձեռնարկատերի նկատմամբ չի կիրառվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները:
Ընդ որում եթե՝

- սույն կետով նախատեսված՝լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի,պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի,պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնի որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո,բայց ոչ ուշ,քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը,ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին,որի հիման վրա մասնակիցը չի ներառվում գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. Ոսկանյան**

Կատարող՝ գնումների համակարգող

Ղևոնդ Գրիգորյան